ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ դեկտ. 1-ին (բաց Ե. 14. Եշ.), կէսօրից յետոյ ժամը 2, 30 Մասաչուսէթսի նահանգների նախագահի մօտ, Ուաշինգթընում։ Սպիտակ Տանը, հանդիսաւոր ընդունելութիւն էր նշանակուած Ն. Ս. Օծութեան Ներկայացուցիչ Ամերիկայի առաջնորդ Գեր. Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհուհեան, որ պիտի պ. Նախագահին ներկայացնէր Ն. Սրբութեան օրհնութեան և շնորհակալութեան գնահատութեան ա. Կոնդակը նորա կատարած կատարեալ մարդասիրական գործի առթիւ դէպի Հայ ժողովուրդը։

Այդ Կոնդակը տուած 1916 թ. ապրիլի 10. 23-ին Ամերիկայի առաջնորդին էր հասած Յունիս 25-ին միայն։ Առանձին գրութեամբ յանուն Առաջնորդի հրահանգուած էր պատշաճ եղանակով և յատուկ պատգամաւորութեան ձեռքով ներկայացնել Հայրապետական օրհնաւոր պատգամատար Կոնդակը։

Ի նկատի ունենալով որ պատգամաւորութիւնը ներկայանում էր յանուն Հայոց Սրբազնակատար Հայրապետի, կարեւոր էր կանխօրէն մշակել որոշ յարաբերութիւններ պարզելու պատգամաւորութեան ընդունելութեան եղանակին ու պատշաճաւորութիւնը։ Այս խնդիրների մասին առանձին, մասնաւոր խորհրդակցութիւններ ունենալով Ամերիկայի առաջնորդը Ուաշինգթընի Եպիսկոպոս. ժողովի Ներկայացուցիչ, հայաւէր Սամուէլ Վինսլոյի (Samuel Winslow) և Ծերակուտական Հենրի Քէբոթ Լօջի (Henry Cobut Loage) հետ որոնցից և վերջինը պիտի զիմէր պ. Նախագահին և նորա հաճութիւնն ստանար ընդունելութեան յարմարաւոր օրը որոշելու համար։ Սակայն ընդունելութեան օրուայ որոշումը յետաձգուեմ է, մինչև պեկտեմբերի սկիզբները հեռեւեալ պատճառներով։ Ցանկալի էր համարուած բացի հայ գաղութի ներկայացուցիչներից, պատգամաւորութեան անդամների մէջ ունենալ նաև Ամերիկեան յայտնի եպիսկոպոսներից, ականաւոր գործիչներից, Ծերակուտական

և երեսփոխանական հայաստէր և հայ գաղութն օժանդակող անդամներից մի քանիսին և։ իսկ տարուայ այդ շրջանում իրրև արձակուրդի շրջան։ երեսփոխանական և ծերակուտական անդամները ցրուած լինելով գժուար էր նոցա համախմբելը։ միաժամանակ նոր նախագահի ընտրութեան շրջան լինելով։ նախագահն ինքն և։ ընտրական պայքարի շրջանգայութեան էր։ եւ անկարող պիտի լինէր այդպիսի մի պատգամաւորութիւն ընդունել մինչև նոյեմբերի վերջերը։

Մինչ այդ ն։ Որբութեան Կոնդակը յանձնուեցաւ թարգմանելու։ անգղիերէն լեզուով վերածելով այն ստուգաբանչեան ոճի։ Այդ փաստուկ գործը յանձն էր առել կատարելու։ Անգլիական եկեղեցու եպիսկոպոսականների Վէյմրիջի ստուգաբանական համարատարանի վերատեսուչ գօրաւոր Քօրք Հօջսն։ որ իրեն յանձնուած գործը կատարել է մեծ հմտութեամբ և արժանացել մեծ գովութեան։ Այդ թարգմանութիւնը յանձնուում է տպագրելու։ Ամերիկայի ամենից հռչակաւոր տպագրիչ Ընտրքին։ Տպագրուած ինչպէս և բուն Հայրապետական Կոնդակը։ Հայկական մանրանկարչութեան գեղեցիկ մի նմուշ։ կարմատեղ և ոսկեպատ զարդերով և խորանարդով մի։ գարու արուեստի և գրուած հին գրչութեան ոճով։ մէջեն մեսրոպեան սեռերանգ գեղեցիկ գրութեամբ։ պատրաստել տուած յատուկ խնամքով։ մագաղաթի վերայ։ յանձնուում է ժառանգաւոր–արուեստագէտ Ջէրվի փորագրչին։ երկուսի համար և։ յատուկ շրջանակներ պատրաստելու։

Նոյեմբերի սկիզբներն Ամերիկայի առաջնորդի գրութեան։ յանուն Նախագահի։ թէ ճրր կհաճի ընդունել յատուկ պատգամաւորութիւն։ որ պիտի ներկայանայ ամենայն Հայոց Հայրապետի կողմից։ առաջնորդարանը տեղեկութիւն է տանում։ որ ընդունելութեան օրը նշանակուած է Դեկտ. 1/14։ եշ. կէսօրից յետոյ ժամը 2։ 30։

Պատգամաւորութեան անձերի կազմը լրացնելու հարցութեան հետ կար և պ. Նախագահին ինչ տարազով ներկայանալու հարցի լուծումը։ Ի Տէր հանգուցեալ Մկրտիչ

Ա. Կաթուղիկոսի կողմից յղուած պատգամաւորութեան եկեղեցական—անդամներին։ Յովսէփ արքեպիսկոպոս Սարքանեանին և Սահակ արքեպիսկոպոս Այվազեանին ժամանակի նախագահ Ռուզվելտը մերժած էր ընդունել հայ եկեղեցականների «քեմով» հեռաւոր պետական կարգ դարձած արտաքոյականի տարբերութիւնները պահպանելու պահանջին։ որով միմիայն սուար պետութիւնների դեսպանները կարող էին ներկայանալ նախագահին իրենց ազգային տարազով։ Այդ կարգը չէր փոխուած նոյն իսկ Հռոմի պապի ներկայացուցիչ Ծերանաւոր Ներրիի ընդունելութեան ժամանակ։ որով Պապի ներկայացուցիչն ստիպուած էր եղած աշխարհիկ տարազով ներկայանալ Ամերիկայի պ. նախագահին։ Սակայն ծերակուտական Լոջի կարեւոր միջնորդութիւններն իրենց ազդեցութիւնն ունեցան յարգել տալու ամենայն Հայոց Հայրապետի առանձին պատգամաւորութեան առաքելութեան նշանակութիւնը, իբրեւ բացառիկ հանգամանք, որի ժամանակ ծերակուտական եւ երեսփոխանական պալատների ներկայացուցիչներն եւ պիտի լինէին։ Թուով 20 հոգի։ որով պատգամաւորութեան բոլորովին այլ նշանակութիւն տրուեցաւ։ Եւ Ամերիկայի Հայոց առաջնորդին արտօնուեցաւ իւր ազգային եկեղեցու տարազով ներկայանալ Միացեալ Նահանգների նախագահին։—վերարկուով։ վեղարով եւ խաչով։ Այս վերջին նկատումներով էր նաեւ։ որ Ապիտակ Տան մէջ ընդունելութեան դահլիճը որոշուեցաւ «Արեւելեան Դահլիճը» որ միմիայն արտակարգ պատգամաւորութեան ընդունելութեան էր սահմանուած։ այդ պատճառով և մուտքը որոշուած էր Արեւելեանը։ որ նոյնպիսի պատգամաւորութեան է վերապահած։ (Ռուզվելտի ժամանակ Հայրապետական պատգամաւորութիւնն ընդունուած է կողմնակի մուտքով եւ առաջնորդուած ընդհանուր դահլիճը)։

Դեկտ. 1/14-ին Ամերիկայի առաջնորդը իւր ուղեկիցների հետ ժամանում է Ապիտակ Տան ճակատի մուտքի առաջ։ որտեղից պալատական սենեկապանները ու մանկլաւիկները առաջնորդում են պատգամաւորներին «Արեւե-

լեան Դահլիճը» (East Room);

Պատգամաւորութիւնը կազմուած էր հետեւեալ անձերից՝—Ամերիկայի առաջնորդ գեր. Տ. Արսէն Ծ. վարդապետ Վէհհունի. Տ. Մատթէոս քահանայ Մանրիկեան. Հայաստէր Ամերիկացիներից և մեծ դիրք ունեցող Ներկայացուցիչներից՝ Հէնրի Քէբրոտ Լօջ (Henry Cabot Lodge) և Ջոն Ուիքս (John W. Weeks of Massachusetts), Երեսփոխաններից Ուատրթ Ներկայացուցիչ Սամուէլ Ուինսլօ (Samuel E. Winslow), Ալէն Թրէդուէյ (Allen T. Treadway), Կալվին Պէյջ. (Calvin D. Paige), Ջոն Ռոջէրս (John Jacop Rogers), Ֆրէդերիկ Դոլինգեր (Frederic W. Dallinger), Ուգուստուս Գարդներ (Augustus P. Gardner), Ուիլիամ Քարթր (William H. Carter, of Massachusetts), Չարլզ Քըրրի. (Charles F. Curry), Դընվեր Չեոչ (Denver S. Church, of California), Սիմոն Ֆէս (Simeon E. Fess, of Ohio), Ջէյմս Սլայդրն (Games L. Slayden, of Texas), Հորաս Թաունէր (Horace M. Towner, of Jowa), Ջոն Իգան (John G. Eagan of New Gersey), Լիւթեր Մոտ (Lutter W. Mott, of New Uork), Չարլս Ստիդման (Charles M. Steadman of North Carolina), Չարլս Լինթիքում (Charles G. Linthicum of Maryland), Հէնրի Կուպեր (Henry A. Cooper, of Wisconsin), Միլիքրն (Governor-elect Milliken of Maine): Հայերից՝ պ. պ. Դոքտոր Փ. Ագամեան, Ճ. Բոյաջեան, Ն. Դիւմիւշկերտեան, Ճ. Քալաճեան, Մ. Սվազլի, տօրթ. Ն. Տ. Մ. Թաշճեան, Արշակ Մահտեսեան The New Armenia լրագրի խմբագիր։

Դռները բացուած են և Միացեալների Նախագահ Թոմաս Վուդրօ Ուիլսոն ներս է մտնում։ Մատաչուզետսի ակադեմիական Ներկայացուցիչ Հէնրի Քէբրոտ Լօջ խօսք առնելով Ներկայացնում է Հայոց առաջնորդին Նախագահին, յայտնելով պատգամաւորութեան նպատակը։ Որից յետոյ առաջնորդը իւր մօտ ունենալով Հայրապետական ս. Կոնդակը կարդում է հետեւեալ դիմումն-ուղերձը.

«Գ. Նախագահ,

«Նորին Սրբութիւն, Ամենայն Հայոց Կաթողիկոս «Գէորգ Ե-ը փափագում է, որ Ձեզ Ներկայացնենք այս

«վաւերագիրն» իբրև երախտագիտական արտայայտութիւն «զէպի մեր ազգատհար ազգը ցոյց տուած Ձեր համակրու-«թեան և օգնութեան»։

«Հարածուած և կողոպտուած, բնաւեր և հայրե-«նազուրկ խոշխոշուած և նահատակուած մի ժողո-«վուրդ ոչինչ տալ չէ կարող իւր բարերարներին, բացի «ածուխ ու մոխրից, արիւն ու արցունքից։ Եւ այդ բոլորի «խորհրդանիշն է նորին Օրրութեան այս կոնդակը։

«Կարմիրը, որ տեսանում էք Կոնդակիս վերայ, ներ-«փայացնում է արիւնն այն հարիւր հազարաւոր անմեղ «մարդոց, կանանց և մանուկների, որոնք անգթօրէն ջարդի «մատնուեցան. Մեռ՝ խորհրդանիշն է այն մութ ճակատա-«գրի, որին ենթակայ է մեր ազգը և կենտրոնի Ոսկեդարը՝ «մեր սիրոն է։ լի երախտագիտական զգացումներով զէպի «Միացեալ Նահանգների Նախագահը։ ինչպէս և զէպի այս-«տատաձեռն երկրի ժողովուրդը։

«Նոյն իսկ այս բոպէիս։ երբ մեր սրտերը խոց են «պատած և արիւնկաթ։ մենք օրհնում ենք մեր բարե-«բարներին և իբրև երախտագիտութեան նշան խնդրում՝ «ենք ընդունել մեր այս տրիտուրը»։

Այս խօսքերն արտասանելու ժամանակ Տ. Արսէն Ծ. վարդապետ իւրաքանչիւր հատուածի հետ մատանիշ էր անում Կոնդակի համապատասխան մասերը։ Խօսքը վերջացնելով Կոնդակը յանձնուեցաւ ս. Նախագահին և կարդացուեցաւ նորա անգղիերէն թարգմանութիւնը։

KEVORK, THE SERVANT OF JESUS CHRIST, AND BY THE WILL OF GOD PRIMATE AND CATHOLICOS OF ALL THE ARMENIANS AND SUPREME PATRIARCH OF THE NATIONAL SEE OF ARARAT, THE APOSTOLIC MOTHER CHURCH OF THE CATHEDRAL OF ETCHMIADZIN, to WOODROW WILSON, President of the United States of America, Greetings. We send you Benediction from our Patriarchal See, and pray for you longlife and strength in the Lord.

MR. PRESIDENT

We are deeply grateful for the many works of kindness which the people of your great Nation have extanded to our little flock scattered throughout the world. Exiled as they are in barren deserts, you extended to them a helping hand that they might be preserved in life, and might steadfastly maintain fhat faith in Christ for the sake of which many of them have been martyred, as the saints were slain of old by the sword of the wicked.

Orphans and widows, old men and children, young brides and tender virgins, deprived of their possessions and bereaved of those dear to them, fed on grass, starving and desolate, raise their hands in prayer that the Lord may assist you to protect those who are living in distress that they may be spared in ftheir places of banishment, and by your care and that of other sympathetic nations may be returned in safety to their homes.

Joining our children in these their prayers, we beseech the Lord of all that the humane compassion of yourself and your Nation may not diminish, and that we may not be left forsaken under the hand of the oppressor, but by your assistance may be delivered and rescued from this heavy yoke. May you be given long life, and strength in the grace and help of the Lord.

(Signed) KEVORK V.
Catholicos of all the Armenians.

April 10/23, 1916.
In the year 1365 of our Calendar,
in the fifth year of our Primacy.
At the Metropolitan See of Ararat,
at Etchmiadzin, Vagarshapad.

Նախագահը խորապէս յուզուած Ն. Սրբութեան Կոնդակի ընթերցումից և պատգամաւորութեան գլուխ՝

Հայոց առաջնորդի դիմումից՝ զգացուած շեշտով որի մէջ երևում էր նորա բարեմտութիւնն ու համակրութիւնը պատասխանեց հետևեալը կոնդակը ձեռքն առած.

«Շնորհակալութեամբ ընդունելով նորին Սրբութիւնն այս կոնդակը պարտք եմ համարում յայտնել, որ Իմ և Միացեալ Նահանգների ժողովրդի համակրանքը Ձեր դժբաղդ ազգի հետ է։

«Մեր կառավարութիւնը՝ Թիւրքիայի մէջ իւրներկայացուցիչների միջոցով ամէն կերպ ջանաց օգնութիւն հասնել Ձեր ազգին։ Բայց ցաւելով է, որ առում եմ, թէ կարելի չեղաւ շատ բան անել։ Շատ բան անել չկարողացանք, սակայն ինչ որ կարողացանք անել՝ արել ենք սիրով և սրտանց, որովհետև գիտենք, որ համաշխարհային այս ազեռից տառապող բոլոր ազգերի մէջ Հայն եղաւ ամենից շատ տուժողը, հետևաբար ամենից աւելի համակրանքի արժանին։

«Կրկին ցաւ յայտնելու պէտք եմ զգում, որ չկարողացանք Ձեր կարօտութիւն համապատասխան չափով օգնութիւն հասնել Ձեզ, որի համար Դուք պարտաւորութիւն զգացիք շնորհակալութիւն յայտնելու։ Մեր ժողովրդի համակրութիւնը Ձեզ հետ է և մենք պիտի աշխատենք աւելին անել, երբ բարեպատեհ առիթը ներկայանայ։

«Շնորհակալ եմ։

Գ. Նախագահը խօսքը վերջացնելուց յետոյ մօտեցաւ ազգնաձև շարքով կանգնած պատուիրակութեան իւրաքանչիւր անդամին և առանձին-առանձին ձեռք տալով, ծանօթացաւ պատգամաւորութեան հոյ անդամներին։ Ծերակուտական և երեսփոխանական գահիճի անդամներին վարդապետի լինելով։ Հոյ պատգամաւորութեան անդամների հետ ծանօթացնում էր Տ. Արսէն Ծ. վարդապետը։ Շրջան առնելով պ. Նախագահի հետ։

Ընդունելութիւնը տևեց 15 րոպէ։

* * *

Ուստր վերադառնալուց յետոյ Ամերիկայի Հայոց Առաջնորդը շնորհակալութեան նամակներ է ուղղել այն բոլոր Հայասէր ամերիկացի ծերակուտականներին և երեսփոխանական դահլիճի անդամներին, որոնք մասնակցել էին պատգամաւորութեան՝ իրեւ անդամներ։ Տ. Արսէն Ծ. վարդապետն ամենքից և փոխադարձ շնորհակալութեան պատասխաններ է ստացել այն պատուի համար, որին նորա բացառիկ դիրքը արժանացել են։ իրեւ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից ներկայացող պատգամաւորութեան անդամ հրաւիրուելով, խստանալով ապագայում և իրենց կատարեալ աջակցութիւնը Հայութեան գատի նպաստաւոր գործակցութեան։

Թէ որչափ մեծ է եղած կոնդակի տպաւորութիւնը Միացեալ Նահանգների պ. Նախագահի վերայ, երեւում է թէ նորա պատասխանից և թէ այն բազմաթիւ նամակներից, որ ստացել է պատգամաւորութեան ներկայանալուց յետոյ Տ. Արսէն Ծ. վարդապետն ակնառու եպիսկոպոսներից, եկեղեցականներից, շատ և շատ ծերակուտականների և երեսփոխանական դահլիճի անդամներից, որոնք ցաւ են յայտնում, որ անկարող են եղած մասնակցել այդ պատուական և պատմական պատգամաւորութեան։

*

Անցեալ գեկտ. 8/21-ին Միացեալ Նահանգների պ. Նախագահի կողմից, իրեւ արտակարգ գոհունակութեան նշան, Ամերիկայի առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետն ստացել է հետեւեալ պաշտօնական գրութիւնը, պ. Նախագահի սեփական ստորագրութիւնը կրող։

Միացեալ Նահանգների դիւանագիտական ընդունուած սովորութիւնից դուրս է գրաւոր պատասխան և տալ Նախագահի կողմից իրեն ներկայացող որ և է պատգամաւորութեան, երբ պատգամաւորութեան բերանացի պատասխան տուած է արդէն։ Մակայն իրեւ բացառութիւն և յարգանք դէպի Հայ ժողովուրդը՝ պ. Նախագահն ուղղել է հետեւեալը։

THE WHITE HOUSE
WASHINGTON

December 21, 1916

Your Eminence:

I was very much touched to receive at your hands the other day the adress which His Holiness, Kevork V, Primate and Catholicos of all the Armenians and Supreme Patriarch of the National See of Ararat, was gracious enough to send me in recognition of such services as the representatives of the United States have been able to render to the distressed Armenians upon whom the burden of the present war has fallen with circumstances of especial tragedy. I am sure that I am expressing the feelings of the people of the United States when I say that the little we have been able to do has been done with hearts full of simpathy, and that the suffering people of Armenia may rest assured that they will continue to receive at our hands an unqualified sympathy and, whenever it is possible, generous assistance.

Cordially and sincerely Yours,
Woodrow Wilson

Rt. Rev. Arsen E. Vehouni,
Prelate of the Armenian Church
in America.

Որի Թարգմանութիւնն է.

Սպիտակ Տուն
Վաշինգթըն

Դեկտ. 21, 1916.

«Ձերդ Գերապատուութիւն,
«Խորապէս յուզուած ընդունեցի անցեալները Ձեզնից
«այն կոնդակը, որ Նորին Սրբութիւն, Տ. Գէորգ Ե. Վե-
«հափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց և Մայրագոյն Գա-

«բիւրքն Արարատեան Ազգային Աթոռի» շնորհ էր տրած «յղել ինձ ի գնահատութիւն այն ծառայութիւնների» որ «իբրև ներկայացուցիչ Ամերիկայի Միացեալ Նահանգների» «կարող էինք եղած մատուցանել շարաւանջ Հայութեան» «որի վերայ է ծանրացած» յատուկ «գրիգորեան պարտականների շնորհիւ։ Ներկայ պատերազմի բեռը։ Վստահ եմ» «որ Միացեալ Նահանգների ամբողջ ժողովրդի զգացումներն է» որ արտայայտում եմ» «առնելով թէ այն փոքրիկ «ծառայութիւնը» որ մատուցել ենք» կատարել ենք հաւատարիմ քրիստոնեի արտով և որ Հայաստանի տառապող «ժողովուրդը թող վստահ լինի» որ իրենք պէտք է ընդունեն նաև ապագայում մեր կատարեալ հաւատարմութիւնը «և» եթէ հնարաւոր լինի» մեր լիակատար օգնութիւնը։

«Միրաքիր և անկեղծօրէն

Ձերդ

(իսկականն ստորագրած)

«Վարդապետ Ալիքսան»։

«Առ Գեր. Տ. Արաէն

«Ս. վարդապետ ՎեհՀուանի»

«Առաջնորդ Հայոց Ամերիկայի»։